# ՔԱՂՎԱԾՔ
## «ԱՐՄԲՐՈԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
### ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ք. Երևան, Հանրապետության 39 «28» հունիսի 2024 թ. ժամը 17:00

Ընկերության թվով 267,150 ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր ունեցող թվով 25 բաժնետերերից մասնակցեցին թվով 181,281 բաժնետոմս ունեցող թվով 11 բաժնետեր, որոնց պատկանում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 67,9%-ը: Հետևաբար, համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին կետի՝ ժողովն իրավազոր է որոշումներ ընդունելու:

Ժողովի նախագահ՝ «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Արամ Կայֆաջյան:

Ժողովի քարտուղար՝ Արաքսյա Հարությունյան:

Ելույթ ունեցավ Արամ Կայֆաջյանը. նա ներկայացրեց բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգը:

**ՕՐԱԿԱՐԳ**

3. Ընկերության 2023թ. շահույթի բաշխման հաստատում, տարեկան շահութաբաժինների չափի հաստատում և վճարման մասին որոշման ընդունում:

---

Քվեարկության դրված հարցը.

3. Ընկերության 2023թ. շահույթի բաշխման հաստատում, տարեկան շահութաբաժինների չափի հաստատում և վճարման մասին որոշման ընդունում:

Քվեարկության արդյունքները.

| | |
|---|---|
| Կողմ | 181,281 |
| Դեմ | 0 |
| Ձեռնպահ | 0 |

Քվեարկության արդյունքում ընդունված որոշումը.

3.1 Ուղղել ընկերության կուտակված շահույթից 400,725,000.00 (չորս հարյուր միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ սովորական անվանական բաժնետոմսերի շահութաբաժինների վճարմանը: Յուրաքանչյուր մեկ սովորական անվանական բաժնետոմսի դիմաց վճարել տարեկան շահութաբաժին 1,500.00 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով:

3.2 Շահութաբաժինների վճարումները կատարել մինչև 2024թ. օգոստոսի 31-ը:

3.3 Շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվը սահմանել Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմելու օրը՝ 2024թ. հունիսի 6-ը:

3.4 Այն բաժնետերերին ովքեր Ընկերությունում ունեն բրոքերային հաշիվ, շահութաբաժինները վճարել իրենց բրոքերային հաշիվներին փոխանցման միջոցով: Բաժնետերերը հետագայում կարող են տնօրինել շահութաբաժինն ըստ հայեցողության

Ժողովի նախագահ և
ընկերության գլխավոր տնօրեն՝ ստորագրություն Արամ Կայֆաջյան
Ժողովի քարտուղար՝ ստորագրություն Արաքսյա Հարությունյան

Արտահերթ ժողովի արձանագրությունը կազմված է 28.06.2024 թ.-ին, սույն քաղվածքը՝ 16.03.2026 թ.-ին, քաղվածքը բաղկացած է 1 (մեկ) էջից:

Հավաստում եմ սույն քաղվածքի
համապատասխանությունը բնօրինակին.
«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն՝ _____ Արամ Կայֆաջյան